

Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 373 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Էներգիայի այլընտրանքային աղբյուր ստեղծելու միջոցով «Երևանի Հ.154 մուտր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի էլեկտրաէներգիայի ծախսերի կրճատում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա):
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, սոցիալական բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	1,600,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Երևանի քաղաքային համայնքն՝ ի դեմս «Երևանի Հ.154 մուտր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունիսի 5-ից մինչև հունիսի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրում՝ 1,600,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունիսի 5-ից մինչև հունիսի 30-ը:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	5.5 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի սարքավորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,600,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Երևանի քաղաքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմինն կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ